ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

1929թ. մայիսին հաստատված հնգամյակի պլանի հիմքը դրվում է նոր տնտեսական քաղաքականության սկզբունքներով: Սակայն այդ գաղափարը չիրականացավ: 1929թ. աշնանը, առանց որևէ արտաքին և ներքին առիթների, Ստալինը ծեռնամուխ եղավ Բուխարինի խմբի ոչնչացմանը: Դա այն խումբն էր, որը գտնում էր, որ պետք է շարունակել ՆԷՊ-ի քաղաքականությունը: Ստալինը իր պլանների իրականացման համար Բուխարինի անմիջական կողմնակիցներին և հաշտվողականներին դրեց տարբեր սպառնալիքների տակ, որն էլ հնարավորություն տվեց իր ձեռքը վերցնել ողջ քաղաքական իշխանությունը: Կտրուկ կերպով երկրում փոխվեց քաղաքականությունը և ՆԷՊ-ը անտեսվեց: ՀԱՄԿ(Բ)Կ կենտկոմի 1929թ. պլենումը խնդիր դրեց նոր ձևով «արագացնել կոլեկտիվացման ընթացքը»:

Քաղաքական կուրսի կտրուկ փոփոխությունը պահանջեց առաջադրված նպատակներին հասնելու անօրինական բազմաթիվ մեթոդներ, որոնց հիմքում դրված էր մեկ նպատակ՝ «սոցիալիզմի կառուցման գործը երկրում անցկացնել պատմականորեն կարճ» ժամանակաընթացքում: Հրամայական համակարգը իրենից ներկայացնում էր հրամանի կարգապահություն, կեղծ խանդավառությունների, բյուրոկրատա-հրամայական և այլ նպատակային սկզբունքներ, որի շնորհիվ պետք է իրականություն դառնար Ստալինի բռնած գործը: Քաղաքական ղեկավարման մեթոդների մեջ սկսեցին գնալով ավելի ու ավելի էական դեր խաղալ քաղաքական բռնությունները: Դատողություններ անելով մարդկանց կազմակերպման և հարկադրանքի միջոցների մասին, Ստալինն ընդգծում էր, որ բռնությունները սոցիալիստական շինարարության բնագավառում հարձակման անհրաժեշտ ձևերն են: Բռնությունների անհրաժեշտությունը հիմնավորելու համար լայնորեն օգտագործվում էին դասակարգային պայքարի սրման պատճառաբանությունները:

Բոլոր հանրապետություններում սկսվեց ստալինյան բռնարարքների իրականացման գործընթացը: Ստալինի համաձայնությամբ Վ.Մոլոտովը կենտկոմի պլենումում արտահայտվեց մեկ տարվա ընթացքում ամբողջ հանրապետությունների համատարած կոլեկտիվացման մասին: Այդ հանգամանքը հարուցեց գյուղացիության տարերային դժգոհություններն ու դիմադրությունը:

Ինչպես բոլոր հանրապետություններում, Հայաստանում նույնպես այդ գործընթացները ընթանում էին ներկուսակցական բանավեճերով, գյուղացիական ելույթներով և դիմադրություններով: Ա.Մանուկյանը իր աշխատության մեջ մեկնաբանելով այդ տարիները ճիշտ է նկատում. «Այսպիսով, քաղաքական բռնաճնշումների մեքենան արդեն ձևավորվել էր և սկսել էր իր սև գործը, որն ավելի ցայտուն դրսևորվեց 1920-ական թվականների վերջերին, սկսված համատարած կոլեկտիվացման տարիներին, ապա սարսափազդու 1937-1938թթ.-երին: Ներկուսակցական անգիջում պայքարը, որն իրականում պայքար էր իշխանության լծակներին տիրելու համար, ձնագնդի նման իջնում էր տեղական կազմակերպությունների վրա, որտեղ տեղական որոշակի, մասնակի երանգավորումներով՝ տեղի էին ունենում նույնատիպ գործընթացներ: Հայաստանի բոլշևիկյան կուսակցությունը բնականաբար առաջնորդվում էր ՀԱՄԿ(Բ)Կ-ից իջնող հրահանգներով: Անկախ տեղում եղած իրական և ոչ իրական, վտանգավոր կամ ոչ վտանգավոր հակառակորդների գործունեությունից, ՀԱՄԿ(Բ)Կ-ի անդրկովկասի կազմակերպության մասը կազմող Հայաստանի Կ(Բ)Կ-ն պետք է ցուցաբերեր իր՝ կենտրոնի որոշումներին հլու վարքագիծը: Դա արտահայտվում էր Հայաստանում, ճիշտ է անհամեմատ թույլ ձևով, իսկ առավել ցայտուն դաշնակցության, սպեցիֆիկների, մասամբ էսեռների ու հնչակների դեմ կատարած քայլերով»:[1]

1925թ. ինքնաթիռի վթարից վախճանվել էր Ալ.Մյասնիկյանը, որին 30-ական թվականներին մեղադրում էին ազգայնամոլության և սպեցիֆիկության մեջ: Տրոցկիզմի մեջ Խորհրդային Հայաստանում այդ տարիներին մեղադրվում էին ՀԿ(Բ)Կ կենտկոմի անդամներ Ռ.Սաֆրասբեկյանը, Գ.Փիրգուլյանը, Պ.Ղազարյանը, որոնց նկատմամբ բազմապիսի անօրինական գործողություններ իրականացվեցին, ընդհուպ նրանց դարձնելով կուսակցական խմբակային ղեկավարներ, այդ խմբերին կցելով, մասնակից դարձնելով «շինծու մարդկանց», այսպես ասված ստալինյան գաղափարների հակառակորդներին: Բավական էր ինչ-որ անօրինական իշխանական գործողության հետ համաձայն չլինել և անմիջապես այդ անձնավորությունը ստանում էր տրոցկիստ որակավորումը և «շինծու կերպով» համարվում էր այդ խմբավորման անդամ: Դա կենտրոնական իշխանության բռնազավթում էր Ստալինի և նրա կողմնակիցների կողմից կենտրոնական ապարատից մինչև հանրապետական ղեկավարություն: Ամենուր կատարվում էին համապատասխան կուսակ-

---

[1] Ա.Մանուկյան. «Քաղաքական կյանքը հայաստանում 1920-40թթ.». ՀՀ ԳԱ «Գիտություն», Երևան 2002թ., 190թ., էջ 32:

ցական զտումներ և անօրինական քայլեր ստալինյան գաղափարներին համաձայն չլինելու համար: Ամենուրեք գտնվում էին ստալինյան գծի իրականացման գործիչներ, որոնք տարբեր տեսակի զրպարտչական հոդվածներ կամ անիրական զեկուցագրեր էին գրում և մեղադրում այլակարծիք գաղափարները: Այդ ամենը նրանք ժամանակի շնչի համաձայն որակում էին որպես «բոլշևիկյան ճիշտ գծից շեղումներ կամ գաղափարական ճակատում գոյություն ունեցող խոշոր սխալներ, Հայաստանում մնացած ազգայնամոլական մտավորական տարրեր, սպեցիֆիկներից, դաշնակցականներից և մենշևիկներից կազմակերպված հակախորհրդային ուժեր»:[2]

1930թ. հունվարի 28-ի հակախորհրդային խմբերի և հոսանքների դեմ մղվող պայքարն ուժեղացնելու մասին ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության որոշման մեջ ասվում է. «Խորհրդային իշխանության տեղական և համապատասխան մարմինների գծով ուժեղացնել պայքարը հակախորհրդային խմբերին ու տարրերին հայտնաբերելու համար: Շտապ միջոցներ ձեռնարկել գոյություն ունեցող խմբերն ու կազմակերպությունները վերացնելու նպատակով, մեկուսացնել հակախորհրդային տարրերին: Այս ուղղությամբ հատուկ մարմինների գործունեությունը պետք է ուղեկցվի գյուղական չքավորության և միջակ գյուղացիության շրջանում մամուլի ու բանավոր քարոզչության զանգվածային աշխատանքով՝ դաշնակների կուսակցության, տրոցկիստների ու այլոց հակահեղափոխական, կուլակային էությունը մերկացնելու և այլ հակախորհրդային տարրերի ու խմբերի դեմ մղվող պայքարում զանգվածների զգոնությունն ու ակտիվությունը միավորելու համար»:[3] Բազմապիսի անմարդկային որոշումներով անօրինական պայքար սկսվեց բոլորովին անմեղ մարդկանց նկատմամբ: Այսպես օրինակ՝ անհիմն մեղադրվեցին ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Ա.Հովհաննիսյանը այն բանի համար, որ էջմիածնում գիտական ինստիտուտ էր հիմնադրել, կենտկոմի քարտուղար Ե.Բակունցը, Ա.Շահգելդյանը, Ա.Շահսուվարյանը մեղադրվեցին այլակարծիք լինելու մեջ, սպեցիֆիկության մեջ մեղադրվեցին ժողկոմխորհի նախագահ Ս.Համբարձումյանը, մարքսիստական խմբի ղեկավար Դ.Անանունին, Թբիլիսիի ղեկավարների հասցեին արված քննադատության համար մեղադրվեց Ա.Խանջյանը, ՀԿԿ ղեկավարությունը մեղադրվեց Ալ.Ռուբենի արձանը ակնգնեցնելու համար և այլն:

---

[2] ՀՀ. ԱԱ. ֆ. 1. ց. 7.գ. 77. թ.37-38:

[3] Վ.Ղազախեցյան, «Հ.Յ.Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 239, արխիվային թարգմանություն, Երևան, 1999թ., Հր. ՀՅԴ բյուրոյի, 369 թերթ:

Նմանատիպ բանսարկու գործերի միջոցով մեղադրում էին Ստալինյան գաղափարներին հակադրվող մարդկանց՝ նրանց անվանելով «պրոլետարական խորթ իդեոլոգիայի, աջ թեքման, օպորտունիզմի և այլ տեսակի ուղղությունների կողմնակիցներ»:

Ստալինյան բռնապետությունը ստեղծում էր մի համակարգ, որտեղ ամեն ինչ ամեն ինչի դեմ էր և այն մարդիկ, որոնք մեղադրում էին այլ մարդկանց, հետագայում նույնպես մեղադրվում էին և ոչնչացվում: Իհարկե այդ ամենը հիմնականում կոծկում էին՝ բարձրացնելով, թե երկրում սրվել է դասակարգային պայքարը և հակախորհրդային ուժերը ակտիվացել և միավորվել են: Այդ զտումների և անօրինականությունների շնորհիվ 1929-1931թթ. ՀԿ(բ)Կ զեկուցագրում ասվում է. «հիմնականում հաջողվել է կուսակցության շարքերը մաքրել քաղաքականապես և գաղափարապես ոչ պիտանի և դասակարգային խորթ տարրերից»:[4] «1930-31թթ. առավել ուղղվածություն է ունենում դեպի գյուղը, որտեղ անց էր կացվում համատարած կոլեկտիվացումը, որի ժամանակ կուսակցության շարքերից վտարվում են 1272 մարդ: Դրա ընթացքում նկատելի են հետևյալ հիմնավորումները՝ «կուլակ», «կոլտնտեսության մեջ մտնելուց հրաժարում», և այլն:[5] Նշենք նաև, որ նույնատիպ զտումներ կատարվում էին նաև կոմերիտմիության մեջ, որի անդամները հետագայում անօրինական աքսորվում կամ ոչնչացվում էին: Բազմաթիվ մարդիկ աքսորվեցին և ոչնչացվեցին իրենց նախկին կուսակցական պատկանելիության շնորհիվ:

Կոլեկտիվացման գործընթացը շարունակվում էր բազմաթիվ բռնարարքներով: Գյուղացիական զինված ելույթները ամենուր էին: Կոլտնտեսություն չմտածներից շատերը հարկադրված զենք էին վերցնում և պայքար սկսում ստալինյան բռնապետության դեմ: Այդ ելույթները դաժանորեն ճնշվեցին: Այս դեպքերի կապակցությամբ 1930թ. մարտի 16-ին ՀամԿ(բ)Կ Անդրերկրամի որոշման մեջ ասվում է՝ «Բանդիտիզմով վարակված շրջաններում ռազմական գործողությունները և քաղաքական ամբողջ աշխատանքները ղեկավարելու համար նշանակել եռյակ, հետևյալ կազմով ընկ. Նազարեթյան, Կարաև, Ադրբա: Այդ շրջանների ՊՔՎ բոլոր զորամասերը, կոմունիստների և միլիցիայի ջոկատները դնել ընկ. Լեպինի հրամանատարության ներքո»: Այնուհետև, որոշման մեջ ասվում է. «զինված ջոկատներ կազմավորել կոմունիստներից, բանվորներից և անհապաղ ամենադաժան պայքարը սկսել զինված գյուղա-

---

[4] ՀՀ. ԱԱ. ֆ.1.ց.11 գ.71, թ.1

[5] Ա.Մանուկյան «Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-40թթ.», ԳԱԱ «Գարուն», Երևան 2002, 190 թերթ. էջ 43:

ցիների դեմ»:[6] Անդրերկոմի համապատասխան որոշումից հետո ընդունվեցին հանրապետական մի շարք որոշումներ, որոնց հիման վրա ամենադաժան մեթոդներով ոչնչացվեցին ստալինյան քաղաքական ավանտյուրային զոհ գնացած շատ անմեղ մարդիկ: Անողոք պայքար էր ընթանում նաև հոգևորականների դեմ: Վանքերի ու եկեղեցիների հողերը բռնագրավվում էին, եկեղեցիներից և վանքերից շատերը դարձնում էին գյուղատնտեսության անհրաժեշտ մթերքների և գյուղացիական մեխանիկական գործիքների, տեխնիկայի պահեստներ: Հոգևորականներից շատերի նկատմամբ նույնպես իրականացվում էին բռնարարքներ, անօրինական գործողություններ, բազմապիսի հետապնդումներ և վերջապես, նրանք մեղադրվելով հակախորհրդային ագիտացիա տանելու մեջ, աքսորվում կամ սպանվում էին: 1930թ. Հայ առաքելական եկեղեցին գլխավորող Գևորգ Ե կաթողիկոսը միանշանակ չընդունեց խորհրդային իշխանության գործողությունները, որը բացահայտ ժխտողական դիրք էր գրավել դեպի կրոնն ու եկեղեցին: Բռնազավթումներից և թալանից բացի քանդվեցին նաև բազմաթիվ եկեղեցիներ, որոնք արվեստի գործեր էին իրենց էությամբ: Այդ տարիներին Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի ՀԽՍՀ ներգործժողկոմատին ուղարկած գրության մեջ ասվում է. «Բռնագրավված են 61 եկեղեցի, Արցախի թեմում 112 եկեղեցուց մնացել է 27-ը, նույն պատկերն է Գանձակի և Նախիջևանի Գողթնյաց շրջաններում»:[7] 1932թ.-ին մահացած Գևորգ Ե կաթողիկոսին փոխարինում է Խորեն Ա -ն, որն էլ ճկուն դիվանագիտությամբ մի կերպ կարողանում է պահպանել իր ցաք ու ցրիվ դարձած թեմերի գոյությունը: Որոշ եկեղեցիներ բռնագրավվում և վերածվում էին հակակրոնական պայքարի կենտրոնների կամ թանգարանների: Այսպես օրինակ՝ «Հայաստանի Ժողկոմխորի նախագահի տեղակալ Ա.Գալոյանը երքաղխորհրդին կարգադրում է վարչական կարգով բանալ Կաթողիկե եկեղեցին բռնագրավել, իսկ Լուսավորիչ եկեղեցու տեղը բացել գիտական-հակակրոնական թանգարան»:[8] Նշենք նաև, որ հարկադրանքի ձևերից էր հոգևորականներին կոլտնտեսության դաշտեր քշելը և ամենածանր աշխատանքներին մասնակից դարձնելը: Այդ կապակցությամբ 1931թ.-ին Խորեն Սրբազանը նամակ ուղարկեց Հայաստանի Ժողկոմխորի նախագահությանը, որտեղ ասում էր. «Տեղական իշխանությունների այդպիսի ընթացքը միտում-

---

[6] Վ.Ղազախեցյան, «Հ.Յ.Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 240, ՀՅԴ բյուրոյի հր., 369 թերթ:
[7] Ա.Սանուկյան, «Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-40թթ.», ՀՀ ԳԱԱ «Գարուն», Երևան 2002թ, էջ 74, 190 թերթ:
[8] Ս.Ատեփանյանց, «Հայ Առաքելական եկեղեցին Ստալինյան բռնապետության օրոք», Երևան, «Ապոլոն» 1994թ., էջ 88, 244 թերթ:

նավոր է և կատարվում է այն անձնական վրեժխնդրությամբ՝ քահանային նսեմացնելու նպատակով»:[9] Կոլեկտիվացման ողջ ընթացքում անզիջում պայքար է տարվել եկեղեցու դեմ, այն որակվել է որպես Խորհրդային ժողովրդի թշնամի: Շինծու դատավարությունների արդյունքում ծերբակալվում էին բազմաթիվ հոգևորականներ: Մամուլի էջերը բարձրահունչ վերնագրերով էին հեղեղվել. «Կուլակներն ու տերտերներն ստացան իրենց արժանի պատիժը», «Կուլակներն ու տերտերները թաքցնում են հացը», «Տերտերները և կուլակները վնաս են հասցնում կոլեկտիվացման գործին», և այլ: «Անաստվածների շարժումը» մեծ տարածում գտավ ԽՍՀՄ հանրապետություններում, այդ թվում նաև Հայաստանում: Այս անմարդկային տարիների քաղաքական գործընթացները ստալինյան անհատի պաշտամունքի և բռնատիրական հասարակարգի ձևավորման արդյունք էին, որ շարունակվեցին նաև հետագայում՝ 1936-37թթ.: Դա մեր պատմության ամենաանմարդկային ժամանակաշրջանն է, որի քաղաքական ճիշտ գնահատականը պետք է տրվի ապագայում նմանատիպ դեպքերը կանխելու մտահոգությամբ:

---

[9] Նույն տեղում, էջ 89: